

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մարտի 2014 թ.

N 140-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ  
ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2014 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## **ԾՐԱԳԻՐ**

### **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ I ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ**

Վերջին տարիներին ավելանում են հանրապետության տարածքում գիշատիչների (գայլեր, շնագայլեր) կողմից անասնապահությանը հասցված վնասի չափերը, շարունակվում են գրանցվել դեպքեր, երբ գայլերը հայտնվում են գյուղական բնակավայրերում և հարձակվում բնակիչների վրա:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գիշատիչների գլխաքանակի կարգավորման նպատակով նախատեսվում է 2014 թվականին շարունակել կենսատեխնիկական միջոցառումների իրականացումը:

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ավելացնել վերականգնել նաև առանձին վայրի կենդանիների, թռչունների թվաքանակը:

#### **2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2014 թվականի ծրագրի շրջանակներում կաջակցվի որսորդներին կենսատեխնիկական միջոցառումների իրականացման հարցում: Տարածքային բնապահպանական, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ համատեղ կկազմակերպվեն շուրջկալային որս տարբեր շրջանների համապատասխան տարածքներում: Կկանոնակարգվի գիշատիչների որսը առանձին որսորդների կողմից՝ հատկապես անտառային ֆոնդի տարածքում:

Միջոցառումների կատարման հետ զուգահեռ կուժեղացվի տեսչական վերահսկողական գործառույթների իրականացումը:

**3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ  
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Գիշատիչների (գայլերի, շնագայլերի) գլխաքանակի կարգավորման, կենսատեխնիկական միջոցառումների իրականացման և որսորդների խրախուսման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից կհատկացվի 12 000 000 (տասներկու միլիոն) դրամ, որից՝

1) գայլերի գլխաքանակի կարգավորման միջոցառումների իրականացման համար՝ 8 800 000 (ութե միլիոն ութ հարյուր հազար) դրամ.

2) շնագայլերի գլխաքանակի կարգավորման միջոցառումների իրականացման համար՝ 3 200 000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**